ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

22 մայիսի 2023 թվական N 372 - Ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 253-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 11-ի «Արցախի Հանրապետությունում այգեգործության զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 253-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

Արցախի Հանրապետության կառավարության
2023 թվականի մայիսի 22-ի
N 372 - Ա որոշման

«Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի մարտի 11-ի
N 253 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գյուղատնտեսությունը երկրի պարենային ապահովության և անվտանգության ապահովման գլխավոր ոլորտն է և ընդհանուր ռազմավարության մեջ այն ունի առանցքային դեր: Նպատակային քաղաքականության իրականացման ու առկա ներուժի լիարժեք օգտագործման շնորհիվ հնարավոր է որոշակիորեն լուծել բնագավառում ծագած մի շարք խնդիրներ: Երկրում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը բարձր մակարդակի հասցնելու գործում կարևոր նշանակություն ունի այգեգործության վարման գիտականորեն հիմնավորված միջոցառումների մշակումը:

2. Վերջին տարիներին այգեգործության ճյուղը որակական լուրջ առաջընթաց է ապրել, բարձրացել է ինտենսիվացման մակարդակը, ներդրվել են նորագույն տեխնոլոգիաներ: Սույն ծրագիրը նախատեսում է պետական աջակցության մեխանիզմների կիրառմամբ խթանել այգեգործության ճյուղի մրցունակության ու եկամտաբերության բարձրացումը, ինչպես նաև կարկտապաշտպան ցանցերի լայնորեն կիրառումը:

3. Ծրագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) բազմամյա տնկարկ՝ այգիներ, անկախ նրանց տարիքից, այդ թվում՝ պտղահատապտղային տնկարկների բոլոր տեսակները (ծառեր և թփեր),

2) տնկի՝ այգի հիմնելու համար սերմերով (տնկարաններում աճեցված և հետագայում պատվաստված), կտրոններով կամ անդալիսով բազմացրած բույսեր, որոնք հետագայում օգտագործվում են մշտական տեղում տնկելու համար,

3) կարկտապաշտպան ցանց՝ կարկուտից բույսերի պաշտպանության համար նախատեսված բազմակի օգտագործման ցանց, որն ունի թեթև զանգված և խիտ կառուցվածք:

4. Ծրագրով ներկայացվում են Արցախի Հանրապետությունում բազմամյա տնկարկների տարածքների ավելացման խթանմանն ուղղված իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Ծրագրի նպատակներն ու խնդիրներն են ՝

1) բարձրացնել պտղաբուծության ճյուղի արդյունավետությունը, ապահովել երկրի բնակչության կարիքները հայրենական արտադրության թարմ և վերամշակված պտուղներով, նվազեցնել ներմուծումը և ավելացնել արտահանման ծավալները,

2) պտղաբուծության զարգացման խթանման միջոցով իրականացնել պտղաբուծության աշխարհագրության ընդլայնման քաղաքականություն,

3) վերամշակող ձեռնարկությունների համար ապահովել անհրաժեշտ քանակությամբ հումք,

4) բերքի ինքնաբավության մակարդակի բարձրացումը, սպառման համար անհրաժեշտ ներկրման քանակի նվազեցումը,

5) համախառն բերքի ծավալների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացումը,

6) գյուղատնտեսության ոլորտի կորուստների ռիսկերի մեղմումը,

7) տարեկան նոր հիմնադրվող այգիների տարածքների ավելացումը,

8) երաշխավորված բերքի ապահովումը:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

6. Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) տնկիների արժեքի մասնակի սուբսիդավորում,

2) կարկտապաշտպան ցանցերի տեղադրման դիմաց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում:

7. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) համակարգում և վերահսկում է Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման գործընթացը:

8. Տեղական ինքնակառավարման մարմինները (Ստեփանակերտ քաղաքում՝ Նախարարությունը), հիմք ընդունելով Ծրագրով սահմանված ժամկետները, ընդունում են այգեգործությամբ զբաղվող հողօգտագործողների հայտերը: Հայտերի հետ միաժամանակ հողօգտագործողները տեղական ինքնակառավարման մարմիններ (Ստեփանակերտ քաղաքում՝ Նախարարություն) են ներկայացնում համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների նկատմամբ սեփականության, և (կամ) վարձակալության, և (կամ) անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ Վկայական) և անձնագրերի պատճենները: Տեղական ինքնակառավարման մարմիններն ընդհանրացնում և շրջանների վարչակազմեր են ներկայացնում իրենց կողմից հաստատված տեղեկանք (տեղեկանքը ստորագրում է նաև համապատասխան շրջանի համայնքը սպասարկող գյուղատնտեսը)՝ նշելով հողօգտագործողի ազգանունը, անունը, հայրանունը, անձնագրային տվյալները, Վկայականի համարը և մշակության համար նախատեսված տարածքների մակերեսները՝ կցելով նաև հայտերի,

Վկայականների պատճենները: Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների վարձակալները հայտերը և կից փաստաթղթերը ներկայացնում են համապատասխան շրջանի վարչակազմ:

9. Տնկիների արժեքի մասնակի սուբսիդավորում՝

1) Արցախի Հանրապետությունում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված՝ նվազագույնը 0.1 հեկտար (մեկ ամբողջական հողատարածքում) այգի հիմնադրելու դեպքում իրականացվում է տնկիների արժեքի մասնակի սուբսիդավորում՝ մեկ տնկիի դիմաց առավելագույնը 1000 ՀՀ դրամ՝ համաձայն N 1 աղյուսակի, իսկ ներկրված (հավաստող փաստաթղթեր՝ սերտիֆիկացված տնկարանային տնտեսության հավաստագիր, ներմուծումը հավաստող փաստաթուղթ, առ ու վաճառքի պայմանագիր և (կամ) հաշիվ ապրանքագիր) մեկ տնկիի դիմաց արժեքի 50 տոկոսի չափով՝ ոչ ավել, քան 2000 ՀՀ դրամ:

2) սույն միջոցառումից օգտվելու պարտադիր պայման է հանդիսանում այդ հողատարածքը ոռոգման ջրով ապահովված լինելը, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող, պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ շրջանի վարչակազմի, իսկ համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը կատարված տունկի մասին.

3) Նախարարությունը սույն միջոցառման շրջանակներում Ստեփանակերտ քաղաքում այգեգործությամբ զբաղվող հողօգտագործողների հայտերը, իսկ Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից՝ սույն միջոցառման շրջանակներում հայտ ներկայացրած հողօգտագործողների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 2 աղյուսակի, ընդունում է 2 փուլով՝ մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը և դեկտեմբերի 1-ը:

10. Կարկտապաշտպան ցանցերի տեղադրման դիմաց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում՝

1) Արցախի Հանրապետությունում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված՝ նվազագույնը 0.1 հեկտար (մեկ ամբողջական հողատարածքում) մակերեսով հողատարածքում հիմնադրված այգիներում կարկտապաշտպան ցանցի տեղադրման դիմաց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում՝

ա. հենասյունային մշակությամբ հիմնադրված յուրաքանչյուր 1 հեկտար այգու դեպքում՝ փաստացի կատարված ծախսերի համապատասխան գումարի 80 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան 3 000 000 ՀՀ դրամ,

բ. առանց հենասյուն հիմնադրված և (կամ) հենասյունային մշակությամբ նոր հիմնադրվող յուրաքանչյուր 1 հեկտար այգու դեպքում՝ փաստացի կատարված ծախսերի համապատասխան գումարի 80 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան 6 000 000 ՀՀ դրամ.

2) Նախարարությունը սույն միջոցառման շրջանակում Ստեփանակերտ քաղաքում կարկտապաշտպան ցանց տեղադրող հողօգտագործողների հայտերը, իսկ Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից՝ սույն միջոցառման շրջանակում հայտ

ներկայացրած հողօգտագործողների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 3 աղյուսակի, ընդունում է մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը:

11. Ծրագրով սահմանված միջոցառումների շրջանակներում սուբսիդավորման և անհատույց ֆինանսական միջոցների տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով՝ Նախարարության և համապատասխան շրջանների վարչակազմերի ներկայացուցիչների ընդգրկմամբ:

12. Հանձնաժողովը, Ծրագրի 9-րդ կետի 3-րդ և 10-րդ կետի 2-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունների ներկայացման պահից հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում ընդհանրացնում, ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ստուգում դրանց ճշտությունը և տալիս եզրակացություն:

13. Նախարարությունը՝ հիմք ընդունելով Ծրագրի 12-րդ կետում նշված տեղեկությունները, դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների հետ՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, կազմակերպում է համապատասխան պայմանագրերի կնքման գործընթացը՝ պետական աջակցության տրամադրումն ապահովելու նպատակով:

14. Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներից:

15. Ծրագրի շրջանակում շահառու չի կարող հանդիսանալ այն անձը, ով նույն այգու հիմնադրման և կարկտապաշտպան ցանցի տեղադրման համար օգտվել է մեկ այլ պետական աջակցության ծրագրից (փոխառություն, վարկ՝ տոկոսի սուբսիդավորմամբ և այլն), բացառությամբ այն անձանց, ովքեր կպարտավորվեն ծրագրի շրջանակում ստացած պետական աջակցության միջոցով ամբողջությամբ մարել պետության հանդեպ ունեցած պարտավորությունները:

4.ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

16. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) շուրջ 335 հեկտար այգու հիմնադրում և 240 հեկտարի վրա կարկտապաշտպան ցանցի տեղադրում,

2) այգիների բերքատվության և ստացվող բերքի որակի բարձրացում,

3) հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի անհրաժեշտության նվազեցում,

4) այգիների արդյունավետ պաշտպանություն կարկուտից,

5) այգեգործության արդյունավետության բարձրացում և տնտեսավարողների եկամուտների աճ:

Աղյուսակ N 1

Մեկ տնկիի դիմաց տրամադրվող գումարի չափը՝ ըստ պտղատեսակների

Հ/Հ	Տնկի	Մեկ տնկիի դիմաց տրամադրվող գումարի չափը (ՀՀ դրամ)
1	նռնենի	150
2	խաղող՝	
	պատվաստված	700
	յուրարմատ	200
3	խնձորենի	600
4	տանձենի	800
5	սերկևիլենի	800
6	զկռենի	800
7	կեռասենի	750
8	բալենի	750
9	սալորենի	750
10	շլորենի	750
11	նշենի	750
12	հոնենի	1000
13	արևելյան խուրմա	800
14	ընկուզենի	1000
15	տխլենի	350
16	թթենի	1000
17	թզենի	500
18	կիվի	600
19	ձիթենի	1000
20	դեղձենի	650
21	ծիրանենի	650
22	նեկտարենի	650
23	ազնվամորի	150
24	մոշենի	300
25	այլ	500

Աղյուսակ N 2

Արցախի Հանրապետության շրջաններում նոր հիմնադրված այգիների մասին

Հ/Հ	Համայնք	Ազգանուն, անուն, հայրանուն	Անձնագրային տվյալները	Պտղատեսակը	Քանակը (հատ)
1					

2					
3					
...					
Ընդամենը՝ շրջանում					

Աղյուսակ N 3

Արցախի Հանրապետությունում կարկտապաշտպան ցանցեր տեղադրող հողօգտագործողների վերաբերյալ

Հ/Հ	Համայնք	Ազգանուն, անուն, հայրանուն	Անձնագրային տվյալները	Տարածքը (հա)
1				
2				
3				
...				
Ընդամենը՝ շրջանում				

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ *Ա. ԼԱԶԱՐՅԱՆ*